ԿԼՈՐ-ՍԵՂԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

ԻՐԱՔՅԱՆ ՔՐԴՍՏԱՆՈՒՄ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՇՈՒՐՋ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Հոկտեմբերի 27-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցավ կլորսեղան քննարկում Իրաքյան Քրդստանում անկախության հանրաքվեի և դրա շուրջ զարգացումների վերաբերյալ: Քննարկմանը մասնակցում էին ինստիտուտի տարբեր բաժինների աշխատակիցներ: Քննարկումը բացեց ԱԻ տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը: Նա ընդգծեց թեմայի կարևորությունը թե՛ Հայաստանի համար, թե՛ աշխարհաքաղաքականության համատեքստում և հանդես եկավ իրավիճակի վերաբերյալ գնահատականով:

Հիմնական զեկույցով հանդես եկավ Միջազգային հարաբերությունների բաժնի գիտաշխատող Մուշեղ Ղահրիյանը: Նա անդրադարձավ Իրաքյան Քրդստանում անցկացված անկախության հանրաքվեի պատճառներին, հանրաքվեից առաջ քրդաբնակ շրջաններում քաղաքական, տնտեսական իրավիճակին: Մ. Ղահրիյանը ներկայացրեց նաև տարածաշրջանային պետությունների, ինչպես նաև գերտերությունների դիրքորոշումները քրդական հանրաքվեի հարցում և իրադարձությունների զարգացման մի շարք սցենարներ:

Բանախոսի և քննարկման մասնակիցների միջև, որից հետո ներկա մասնագետները հանդես եկան իրենց տեսակետներով, դիտարկումներով և նկատառումներով: Իրաքյան Քրդստանում և դրա շուրջ առկա իրավիճակի վերաբերյալ մասնավորապես գնահատականներով հանդես եկան պրոֆեսոր Վահան Բայբուրդյանը, ինստիտուտի աշխատակիցներ Տաթևիկ Մանուկյանը, Լևոն Հովսեփյանը, Արաքս Փաշայանը, Արմեն Մանվելյանը, Զվարթ Հովսեփյանը:

Քննարկման ընթացքում արծարծվեցին Քիրքուքում հնարավոր զարգացումներ, տարբեր երկրների կողմից քրդական անկախությանն աջակցելու կամ չընդունելու, նավթային,

քրդերի հասարակական կառուցվածքի և հարաբերությունների և մի շարք այլ թեմաներ:

Գնահատելով կլոր սեղանի ընթացքում հնչեցրած մոտեցումներն ու կարծիքները՝ Ռ. Սաֆրաստյանը նշեց, որ համոզված է, որ տեղի ունեցած հանրաքվեն պետք է դիտարկել լոկ քայլերից մեկը քրդական պետության ստեղծման երկար ու փշոտ ճանապարհին և չպետք է գերագնահատել դրա նշանակությունը: Միաժամանակ քրդական գործոնն իր ընկալմամբ աստիճանաբար կստանա ավելի մեծ նշանակություն, ինչը էլ ավելի կթեժացնի Մերձավոր Արևելքում ծավալվող աշխարհաքաղաքական հակամարտությունը գլոբալ ու տարածաշրջանային մի շարք ուժերի կենտրոնների միջև: Այն կարելի է որոշ չափով նմանեցնել XIX դարում Բրիտանական և Ռուսական կայսրությունների միջև ծավալված աշխարհաքաղաքական պայքարին, որը մասնագիտական գրականության մեջ ընդունված է բնութագրել որպես «Մեծ խաղ»: Ուժային կենտրոնների միջև աշխարհաքաղաքական հակամարտության թեժացումն իր հերթին կազդի քրդական գործոնի վրա, և նրա շուրջ ընթացող զարգացումները կստանան գիտական առումով էլ ավելի հետաքրքիր և միաժամանակ դժվար կանխատեսելի բնույթ: Այսպիսով, քրդական գործոնը դեռևս երկար է գտնվելու գիտական և քաղաքական քննարկումների առանցքում, որոնցում մեր ինստիտուտը նույնպես կունենա իր ներբերումը: